

ՀՆԴԵՎՐՈՂԱԿԱՆ ԿՈԿՈՐԴԱՅԻՆՆԵՐԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ Ի Ի ՏԵՍԶՈՎ

Ս. Ռ. ԱՎԵՏՅԱՆ

Կոկորդայինների հարցը հ.-ե. հնչյունական համակարգի ամենավիճահարույցներից է: Մասնավորապես հ.-ե. կոկորդայինների քանակի և բնույթի վերաբերյալ լեզվաբանության մեջ միասնականություն գոյություն չունի¹: Նույնքան վիճահարույց են հայերենում հ.-ե. կոկորդայինների ենթադրյալ դրսևորումները: Կոկորդայինների տեսության մի շարք ներկայացուցիչներ հատուկ անդրադարձել են հայերենում հ.-ե. կոկորդայինների դրսևորման խնդրին²՝ փորձելով կոկորդայինների հետ կապել հայերեն մի շարք բառերի բառասկզբի **հ** հնչյունը³: Այս առումով ուշագրավ է Գ. Ջահուկյանի տեսակետը. «Նախահնդեվրոպական կոկորդայինների հարցը չի կարելի վերջնականապես վճռված համարել: *Առավել ևս չի կարելի խոսել հայերենում այդ կոկորդայինների օրինաչափ արտացոլման մասին*: Կոկորդայինների տեսության կողմնակիցների շատ ստուգաբանություններ կասկածելի են, իսկ երբեմն էլ՝ պարզապես սխալ: *Քերվոդ գուգահեռներն էլ ոչ միչքան օրինաչափ բնույթ կրում*: Այսպես, *խեթերեն բառասկզբի հ-ին հայերենում երբեմն համապատասխանում է հ, երբեմն էլ զոն (Յ)*: Մասնավորապես պետք է նկատի ունենալ, որ հայերենում բառասկզբի **հ**-ը կարող է լինել նաև ինքնուրույն (երկրորդական) զարգացման արդյունք, ինչպես ցույց են տալիս հայերեն բարբառների տվյալները և հ.-ե. *gk> գրաբ, հաս-ան-են հնչյունական զարգացումը»³ (ընդգծումը մերն է - Ս. Ա.): Այդուհանդերձ, Գ. Ջահուկյանը սկզբունքորեն դեմ չէ, որ մի շարք դեպքերում հայերեն բառասկզբի **հ**-ը կարող է ծագած լինել հ.-ե. կոկորդայիններից, և տալիս է այդ բառերի ցանկը⁴: Նույն հարցը Ն. Միմոնյանը քննել է հայերեն բարբառների տվյալների հիման վրա: Ընդ որում, նա գրաբարյան բառերում բառասկզբի զրոյի (Յ) դիմաց ժամանակակից բարբառներում **հ** ունեցող բառերը քննելիս ցուցաբերում է տարբերակված մոտեցում՝ փորձելով, ըստ հնարավորին, միմյանցից առանձնացնել հ.-ե. շրջանին հանգող հնարանությունները և հետագա նորագոյացումները: Հ.-ե. հնարանությունների դեպքում էլ նա տարբերակում է հայ. **հ**-ի ծագման հ.-ե. երկու հնարավոր աղբյուր. ա) հ.-ե. *p-ը և *s-ը, բ) նախահնդեվրոպական կոկորդայինները⁵:

¹ Կոկորդայինների տեսության մասին հանգամանորեն տե՛ս Օ. Szemerényi, Einführung in die vergleichende Sprachwissenschaft, Darmstadt, 1970, էջ 114-123, Ի. Մ. Тронский, Историческая грамматика латинского языка, Общеиндоевропейское языковое состояние, М., 2001, էջ 418-426, Գ. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ер., 1967, էջ 72-74, Ա. Н. Савченко, Сравнительная грамматика индоевропейских языков, М., 1974, էջ 131:

² Տե՛ս Գ. Джаукян, նշվ. աշխ., էջ 74, Э. Макаев, Структура слова в индоевропейских и германских языках, М., 1970, էջ 148-149:

³ Գ. Джаукян, նշվ. աշխ., էջ 238-239:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 239-243:

⁵ Տե՛ս Ն. Միմոնյան, Հայ բարբառների հնդեվրոպական հնարանությունները, «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», Եր., 1979, էջ 218-219, 207-209, 215:

Ն. Միմոնյանը հայերեն բարբառներում հ.-ե. կոկորդայիններից ծագած **հ**-ը բացահայտելիս հիմք է ընդունում մի կողմից՝ հ.-ե. *p* -ին և *s*-ին չհանգող հայ. *h* (յ) - թոխ. *ā* կամ *yā*, *ya* հնչյունական համապատասխանությունը, մյուս կողմից՝ թոխ. երկար *ā* - խեթ. *ha* համապատասխանությունը⁶:

Նշված համապատասխանությունները իրոք առկա են մի շարք դեպքերում, ընդ որում, ոչ միայն հայերեն բառերի բարբառային ձևերում, այլ հաճախ նաև գրաբարյան ձևերում: Սակայն ներքին հակասությունների պատճառով իրականում հնարավոր չէ ապացուցել հայ. **հ**-ի՝ հ.-ե. կոկորդայինից ծագած լինելը: Փորձենք քննության ենթարկել ամենատիպիկ համապատասխանություններից մի քանիսը:

Այսպես, գրաբ. անդ, «Վարք սրբոց հարանց» -ում՝ նաև հանդ, բրբռ. հանդ, հուն. *ἄνθος*, թոխ. *U. ānt* Բ. *ānte*,

գրաբ. հողմ, թոխ. *U. Բ. āñm*,

գրաբ. արօր, հարատունք, բրբռ. հարօր, խարօր, լատ. *arvus*, թոխ. *U. Բ. āre*, խեթ. *harra*,

գրաբ. արծաթ, բրբռ. արծաթ, արգաթ, առծաթ, հուն. *ἄργυρ*, խեթ. *harki*, թոխ. *U. ārki*,

գրաբ. ոսկր, բրբռ. օսկօր, օսկօն, ուսկոռ, խեթ. *hastai*, հուն. *ὄστέον*,

գրաբ. ոստ, բրբռ. օստ, ոստ, վուստ, հուն. *ὄζος*, խեթ. *hastuir*, *hasduir*,

գրաբ. հովիւ, բրբռ. հովիվ, խօվիվ, խեթ. *hawa*, հուն. *ὄ(F)ίς*,

գրաբ. հան, բրբռ. խանիկ, հուն. *ἄρνις*, խեթ. *hannus* և այլն⁷:

Կոկորդայինների տեսության համաձայն, եթե խեթերենի *h*-ը և թոխ. *ā*-ն վկայում են ձայնավորից առաջ *h*-ե. կոկորդայինի առկայության մասին, ապա *h*-ե. մյուս լեզուների շնորհիվ (հունարեն, լատիներեն և այլն) որոշվում է *h*-ե. կոկորդայինի որակը՝ *H1*, *H2*, *H3*: Ըստ այդմ՝ հունարեն, լատիներեն վերոհիշյալ ձևերի դեպքում հայերենի **հ**-ի նախատիպերը եղել են *H2*-ը և *H3*-ը: Ուստի հարց է առաջանում, թե ինչու միևնույն *H2*-ը գրաբարյան վերոհիշյալ անդ, արծաթ, արօր ձևերում բացակայում է, մինչդեռ հանդես է գալիս հանդ, գրաբ. հարատունք, հան ձևերում: Այսպես էլ միևնույն *H3*-ը գրաբարյան ոսկր, ոստ ձևերում բացակայում է, մինչդեռ հանդես է գալիս գրաբ. հողմ, հովիւ ձևերում: Թերևս այս դեպքում *h*-ե. միևնույն կոկորդայինի մի կողմից՝ հայ. **հ**, մյուս կողմից՝ գրո (Չ) դրսևորումները կարելի է բարբառային հնագույն տարբերությունների արդյունք համարել, որքանով հայ մատենագրության մեջ առկա զուգաձևությունները սովորաբար դիտվում են իբրև բարբառային հնագույն տարբերությունների անհերքելի ապացույցներ: Բայց հարցը դրանով չի լուծվում, որովհետև *h*-ե. կոկորդայինների հետ կապվող հայ. **հ**-ի առկայությունը ժամանակակից հայերենի բարբառներում (միևնույն բարբառի ներսում) նույնպես օրինաչափ բնույթ չի կրում: Այսպես, ըստ Հ. Աճառյանի «Հայերեն արձատական բառարան»-ի տվյալների, մի կողմից վերոհիշյալ թոխ. *U. ānt*, Բ. *ānte*, գրաբ. անդ ձևերի դիմաց Գորիսի, Երևանի, Կարինի, Տիգրիսի, Ղարաբաղի բարբառներում առկա են *h*-ով ձևեր՝ հանդ, հանտ և այլն, մյուս կողմից՝ խեթ. *harki*, թոխ. *U. ārki*, գրաբ. արծաթ ձևերի դիմաց նույն բարբառներում առկա են առանց *h*-ի ձևեր՝ արծաթ, էրծաթ և այլն⁸:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 219 -220:

⁷ Տե՛ս նույն տեղը, Հ. Աճառյան, Հայերեն արձատական բառարան, հ. 1, Եր., 1971, էջ 186, 317-318, հ. 3, Եր., 1977, էջ 66-67, 567, Գ. *Джаукян*, նշվ. աշխ., էջ 241-242, Թ. *В. Гамкрелидзе*, *В. В. Иванов*, Индоевропейский язык и индоевропейцы, т. 1, Тбилиси, 1984, էջ 158-159, 203: Հայերեն բարբառային ձևերը հիմնականում տրված են ըստ Հ. Աճառյանի «Հայերեն արձատական բառարանի» տվյալների:

⁸ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 186, 318:

Այդպես էլ մի կողմից խեթ. *hawa*, գրաբ. հովիւ ձևերի դիմաց Ալաշկերտի, Երևանի, Համշենի, Մուշի, Սվեդիայի, Մոկաց, Վանի բարբառներում առկա են *h*-ով կամ *hu*-ով ձևեր՝ հովիվ, խովի, մյուս կողմից՝ խեթ. *hastai*, գրաբ. ոսկր և խեթ. *hastuir*, *hasduir*, գրաբ. ոստ (ճյուղ) ձևերի դիմաց վերոհիշյալ մույն բարբառներում առկա են առանց *h*-ի և (վերջինիցս ծագած խ-ի) ձևեր՝ օսկօր, օսկոտ, ուսկոռ, ոստ, վուստ, օստ և այլն⁹:

Ուստի, քանի որ ենթադրյալ *h*-ե. կոկորդայինները միևնույն բարբառի մեջ ևս օրինաչափ կերպով չեն դրսևորվել, հայերեն բառասկզբի *h*-ը եթե նույնիսկ իրոք ծագած լինի *h*-ե. կոկորդայիններից, կարծում ենք, այդ հնարավոր չէ ապացուցել: Բացի այդ, տարբեր լեզուների պատմական զարգացման ընթացքում մի կողմից *h*-ի անկման, մյուս կողմից՝ *h*-ի երկրորդական հավելման հնարավորությունը նկատի ունենալու դեպքում հայերեն բառասկզբի *h*-ի ծագումնաբանական մեկնաբանությունը էլ ավելի է բարդանում.

ա) *h*-ի անկման օրինակներ

Բառասկզբի *h*-ը, որը լատիներենի հնագույն շրջանում արտասանվում էր ուժեղ շնչով, Ցիցերոնի ժամանակ անհետանում է՝ արհեստականորեն պահպանվելով միայն ուղղագրության մեջ¹⁰: Այդ մասին են վկայում նաև ռոմանական լեզուների տվյալները. հմմտ.՝ լատ. *hominem* - եզ. *hայց*. հոլովի ձևից > ֆր. *homme* [om], իսպան. *hombre* [ombre], ռում. *om* «մարդ»; լատ. *habere* «ունենալ» > ֆր. *avoir*, իսպան. *haber* [aber] և այլն:

Այդպես էլ հուն. *ἴσθημι*, *ἄμος* և այլն բառերի բառասկզբի *h*-ը (•) անհետանում է մոտավորապես մ.թ. V դարից սկսած¹¹:

բ) *h*-ի երկրորդական հավելման օրինակներ

Մեծ չափով *h*-ի երկրորդական հավելում է տեղի ունեցել հունարենի ատտիկյան բարբառում: Ընդ որում, Ս ձայնավորից առաջ *h*-ի հավելումը բացարձակ բնույթ է կրում, այնպես որ Ս-ով (առանց *h*-ի) ոչ մի բառ գոյություն չունի¹². հմմտ.՝ սանսկ. *upari* - հուն. *ὑπερ*, սանսկ. եզ. *սեռ*. հոլ. *udnah* «ջրի», ներգոյ. հոլ. *udan* «ջրում» - հուն. *ουρη*. հոլ. *ὕδωρ*, սեռ. *ὕδατος* և այլն:

Մյուս ձայնավորներից առաջ էլ *h* (•)-ի հավելման բազմաթիվ դեպքեր են հանդիպում:

Այդպես էլ հմմտ.՝ ասոր. *abilā* > գրաբ. *աբեղայ*, բրբռ. *հաբեղայ*,

պիլ. *anāpāt* > գրաբ. *անապատ*, բրբռ. *հանապատ*,

ասոր. *urraku* > գրաբ. *ուրագ*, բրբռ. *հուրագ* և այլն¹³:

Նմանապես, բառասկզբում ձայնավորից առաջ *h*-ի կամ *x* -ի երկրորդական հավելում է տեղի ունեցել իրանական որոշ լեզուներում, ինչպես ցույց են տալիս հետևյալ օրինակները.

հուն. *ῥωμος*, սանսկ. *āma*, աֆղան. *om*, *um*, բելուճ. *hāmag*, պարսկ. *xam*¹⁴,

լատ. *equus*, սանսկ. *aśva*, պարսկ. *asb*, քրդ. *hasp*, բելուճ. *aps*, *haps*¹⁵,

հուն. *ῥοκτω*, սանսկ. *ašta*, պարսկ. *hašt*, քրդ. *hešt*¹⁶,

⁹ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 3, էջ 118, 567, 569:

¹⁰ Տե՛ս Զ. Бурсье, Основы романского языкознания, М., 1952, էջ 45:

¹¹ Տե՛ս К. Brugmann, Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, Bd. I, Strasburg, 1897, էջ 746:

¹² Տե՛ս Н. Kronasser, Vergleichende Laut- und Formenlehre des Hethitischen, Heidelberg, 1956, էջ 83:

¹³ Տե՛ս Ն. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 213:

¹⁴ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 3, էջ 121:

¹⁵ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ. հ. 2, Եր., 1973, էջ 117:

¹⁶ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 3, էջ 590:

հուն. ὄστειον, խեթ. hastai, ավեստ. asti, պարսկ. ast, աֆղան. had, քրդ. hasti, hesti¹⁷ և այլն:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ թեև վերջին դեպքում խեթ. hastai -ի հիման վրա ենթադրվում է հ.-ե. կոկորդայինով նախաձև, սակայն ոչ մեկը աֆղան. had, քրդ. hasti, hesti ձևերի **h**-ը չի դիտում իբրև հ.-ե. կոկորդայինի դրսևորում, որովհետև իրանական վերոհիշյալ ձևերի **h**-ը իրականում երկրորդական հավելում է ներկայացնում: Ուստի խեթ. hastai -աֆղան. had, քրդ. hasti, hesti համապատասխանության հիման վրա բնականաբար հարց է առաջանում. արդյո՞ք խեթ. **h** - հայ. **h** համապատասխանություններն էլ իրականում նույնախիսի պատահական զուգահիշության արդյունք չեն:

Ինչպես արդեն նշել ենք, կոկորդայինների քանակի և բնույթի վերաբերյալ լեզվաբանության մեջ միասնականություն չկա: Մյուս կողմից՝ կոկորդայինների տեսությունն էլ ոչ բոլոր լեզվաբաններն են ընդունում¹⁸: Այսպես, Է. Մակաևը ընդհանուր լեզվաբանության և տիպաբանության դիրքերից քննադատում է կոկորդայինների տեսության հիմնական դրույթները: Նա շեշտում է այն հանգամանքը, որ հ.-ե. ենթադրյալ կոկորդայիններին վերագրվում է բազմատեսակ հնչյունական փոփոխություններ առաջ բերելու հատկություն՝ ձայնավորների երկարեցում, ձայնավորների հերթազայություն, չուլցմանի օրենք, պարզ խուլերի շնչեղացում, ձայնեղացում, կոկորդայինի վերածվելը **k** -ի կամ **r** -ի, հայերենի և հունարենի ձայնավոր նախահավելվածներ և այլն: Մինչդեռ ընդհանուր տիպաբանության մեջ դեռևս չի հայտնաբերվել հնչյունների մի այնպիսի կարգ, որն անհետանալու ժամանակ առաջ բերած լինի այդքան բազմաթիվ ու բազմաբնույթ երևույթներ¹⁹: Բացի այդ, վիճահարույց է նաև խեթա-լուվական լեզուների տվյալների դերը կոկորդայինների տեսության հիմնավորման հարցում: Այսպես, նշանավոր խեթագետ Հ. Կրոնասերը հանգամանորեն քննության ենթարկելով խեթերենում **h** գրանշանի գործածության պայմանները՝ գտնում է, որ խեթ. **h**-ը ոչ մի կապ չունի հ.-ե. կոկորդայինների հետ: Նա վկայակոչում է հ.-ե. տարբեր լեզուներում **h**-ի երկրորդական հավելման բազմաթիվ դեպքեր և փորձում է ցույց տալ, որ խեթ. **h**-ը նույնպես առաջացել է այդ եղանակով: Ընդ որում, Կրոնասերը երկրորդական հավելման արդյունք է համարում ոչ միայն խեթերեն բառասկզբի, այլ նաև բառի մեջ երկու ձայնավորների միջև հանդես եկող **h**-ը, որը, նրա կարծիքով, ներկայացնում է միջանցումային հնչյուն (Übergangslaut): Իր տեսակետը հիմնավորելու համար նա համանման օրինակներ է բերում օսկերենից և ումբերենից. հմմտ. * stā-ō> ձուլումով՝ լատ. sto «կանգնած են», բայց երկու ձայնավորների միջև **h**-ի հավելումով՝ ումբր. stahu, օսկ. stahint «կանգնած են» և այլն: Այնուհետև, ինչպես stah - տարբերակը համաբանությամբ սկսել է գործածվել նաև հաջորդող բաղաձայնից առաջ՝ հմմտ. ումբր. stahmei, stahmito և այլն, Կրոնասերը նույնախիսի գործընթաց է ենթադրում նաև խեթ. nah (h)ut → nah → nahmi և այլն ձևերի առաջացման համար²⁰:

Այսպիսով, վերը կատարված քննությամբ մենք հանգում ենք հետևյալ ընդհանուր եզրակացություններին.

1. Նկատի ունենալով, որ հ.-ե. կոկորդայինների ենթադրյալ դրսևորումները հայերենում **h** -ի տեսքով ոչ գրաբարում և ոչ էլ հայերեն բարբառներում (միևնույն բարբառի ներսում) օրինաչափ բնույթ չեն կրում, կարծում ենք, հայերեն նշված

¹⁷ St' u H. Kronasser, նշվ. աշխ., էջ 82, Հ. Անաոյան, նշվ. աշխ., հ. 3, էջ 567:

¹⁸ St' u O. Szemerényi, նշվ. աշխ., էջ 114-123, A. H. Савченко, նշվ. աշխ., էջ 137:

¹⁹ St' u Э. Макаев, նշվ. աշխ., էջ 138-139:

²⁰ St' u H. Kronasser, նշվ. աշխ., էջ 75 - 96:

տիպի բառերի **հ** - ը իրականում հնարավոր չէ ծագումնաբանորեն կապել հ.-ե. կոկորդայինների հետ:

2. Ընդհակառակն, տարբեր լեզուներում բառակզրի **հ** -ի երկրորդական հավելման դեպքերը ավելի շուտ ենթադրել են տալիս, որ հ.-ե. կոկորդայինների հետ կապվող բառակզրի **հ** - ը նույնպես առաջացել է այդ եղանակով:

3. Ըստ այդմ խեթ. **հ** - հայ. **հ** ոչ օրինաչափ համապատասխանություններն ավելի ճիշտ կլինի համարել նույնպիսի պատահական զուգահիշություններ, ինչպիսին է խեթ. hastai - աֆղան. had, քրդ. hasti, hesti նշված համապատասխանությունը:

С. Р. АВЕТЯН - Предполагаемые проявления индоевропейских ларингалных в армянском в виде «h».- Некоторые лингвисты, как известно, пытались начальное *h* ряда армянских слов генетически связать с индоевропейскими ларингалными. В настоящей статье делается попытка показать, что такое мнение на самом деле не обосновывается соответствующими лингвистическими фактами. Во-первых, невозможно установить фонетические закономерности между приводимыми хеттскими и армянскими параллелями.

Во-вторых, само явление как отпадания, так и вторичного появления фонемы *h* в историческом развитии различных языков приводит, скорее, к выводу, что армянское указанное *h* тоже возникло вторично аналогичным путем.